ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Օգտվողի գաղտնիություն**

«ԻԴ ՊՐԻՆՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն կամ ԻԴ ՊՐԻՆՏ) սույնով պարտավորվում է չվաճառել և (կամ) այլ եղանակով չբացահայտել որևէ տեղեկություն ԻԴ ՊՐԻՆՏ-ի ծառայություններից օգտվողների մասին որևէ անձի, բացառությամբ սույն գաղտնիության քաղաքականությունում նշված դեպքերի: ԻԴ ՊՐԻՆՏ-ի կայքը կամ էլեկտրոնային հավելվածն (այսուհետ՝ Հավելված) օգտագործելով օգտվողը (այսուհետ՝ Օգտվող) տալիս է իր համաձայնությունը Ընկերության կողմից իր վերաբերյալ տեղեկությունների հավաքագրմանը, օգտագործմանը, բացահայտմանը և փոխանցմանը ներքոհիշյալին համաձայն: Սույն գաղտնիության քաղաքականությունը կարող է պարբերաբար վերանայվել, որի արդյունքում ցանկացած կատարված փոփոխություն համարվում է ուժի մեջ մտած անմիջապես:

2. **Տեղեկությունների հավաքագրում**

1) ԻԴ ՊՐԻՆՏ-ի կայք այցելելիս կամ Հավելվածն օգտագործելիս դիտարկիչը (բրաուզեր) կամ Հավելվածը կարող են տրամադրել որոշակի տեղեկություններ, այդ թվում՝ Օգտվողի համակարգչի կամ հեռախոսի դիտարկիչի տեսակի, օպերացիոն համակարգի, IP հասցեի, էջը բացելու և փակելու, Հավելվածն օգտագործելու ամսաթվի և ժամանակի վերաբերյալ: Կայքից կամ Հավելվածից օգտվելու ժամանակ տեղեկությունների հավաքագրում չի իրականացվում.

2) կայքի կամ Հավելվածի միջոցով Ընկերության հետ կապ հաստատելու համար Օգտվողից կարող է պահանջվել որոշակի տեղեկությունների տրամադրում, ինչպիսիք են Օգտվողի անունը, ազգանունը, էլեկտրոնային փոստի հասցեն, կոնտակտային այլ տեղեկություններ: Նշված տեղեկությունների չտրամադրման դեպքում՝ կայքի կամ Հավելվածի միջոցով Ընկերության հետ կապ հաստատել չի ստացվում:

3) ԻԴ ՊՐԻՆՏ կայքին միանալու ժամանակ Ընկերության ցանցային սերվերները կարող են Օգտվողի համակարգչի կոշտ սկավառակի վրա տեղադրել քուքիներ, որը թույլ է տալիս ճանաչել Օգտվողի համակարգիչը կամ հեռախոսը՝ հնարավորություն տալով Ընկերությանը հետազոտելու կայքի տրաֆիկի կաղապարը՝ ԻԴ ՊՐԻՆՏ-ի կայքը և նրա կողմից մատուցվող ծառայությունները բարելավելու նպատակով:

3. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

1) Կայքի կամ Հավելվածի միջոցով Ընկերության հետ կապ հաստատելու ժամանակ Օգտվողի կողմից տրամադրված տեղեկություններն Ընկերությունը պարտավորվում է օգտագործել միայն պահանջվող տեղեկությունը (ինֆորմացիան) տրամադրելու, ինչպես նաև ԻԴ ՊՐԻՆՏ-ի կողմից կազմակերպվող միջոցառումների, հրատարակությունների և ծառայությունների (այդ թվում նոր ծառայությունների) մասին Օգտվողին տեղեկացնելու համար:

2) Օգտվողի համակարգչից ստացված տեղեկությունները Ընկերությունն օգտագործում է միայն ներքին նպատակների համար և չի կարող այն օգտագործել մարկետինգի կամ աշխատանքային նպատակներով անձանց հավաքագրելու համար: Ընկերությունը չի օգտագործում քուքիները (տեղեկությունները) երրորդ անձանց մարկետինգային նպատակներով բաժանելու կամ տրամադրելու համար:

3) Ընկերությունը կողմից Օգտվողի վերաբերյալ տեղեկությունները պետական մարմիններին, կազմակերպություններին և երրորդ անձանց կարող են բացահայտվել միայն այն դեպքում, եթե դրա բացահայտման պարտավորությունը նախատեսված է ՀՀ օրենսդրությամբ: